



1. Վաճառողը և Գնորդը կնքում են առևտրային պայմանագիր՝ հետաձգված վճարման պայմանով
2. Վաճառողի և Բանկի միջև կնքվում է դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագիր
3. Վաճառողն իրականացնում է ապրանքի մատակարարումը / ծառայության մատուցումը / աշխատանքի կատարումը
4. Վաճառողը և Գնորդը կազմում են ապրանքի մատակարարման / ծառայության մատուցման / աշխատանքի կատարման հանձնման-ընդունման ակտ
5. Վաճառողը Բանկին ներկայացնում է դրամական պահանջը հիմնավորող փաստաթղթեր, ինչպիսիք են՝ հաշիվ-ապրանքագիրը, տրանսպորտային փաստաթուղթը, հանձնման-ընդունման ակտը և այլն
6. Բանկը Վաճառողի կողմից զիջված դրամական պահանջի դիմաց իրականացնում է ֆինանսավորում հաշիվ-ապրանքագրի գումարի մինչև 90%-ի չափով
7. Գնորդը Վաճառողի հետ նախապես պայմանավորված ժամկետում Բանկին վճարում է հաշիվ-ապրանքագրի ամբողջ գումարը
8. Բանկն իրականացնում է վերջնահաշվարկ և Վաճառողին վերադարձնում Գնորդի կողմից վճարված հաշիվ-ապրանքագրի ամբողջ գումարի և Վաճառողին տրամադրված ֆինանսավորման գումարի ու հաշվեգրված տոկոսագումարի հանրագումարի տարբերությունը